Ս. Ներսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamaynqapetaran@list.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<28>> փետրվարի 2024 թվական N 11-Ա

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 11-րդ հոդվածի, 13-րդ հոդվածի 10-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

Թալին համայնքի ավագանին որոշում է՝

1.Թալին համայնքի 2024թ-ի բյուջեում նախատեսել 20 մլն դրամ գումար՝ 2024թ-ի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:

2.Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սոցիալ-տնտեսական, մշակութային, կրթական և առողջապահական ոլորտները սահմանել որպես առաջնահերթություն:

3.Համայնքի ղեկավարին՝

1) Սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը, որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2024թ-ի ՄԺԾԾ-ում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում:

2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկները ներկայացնել ավագանու հավանությանը.

3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

1.Տավրոս Սափեյան
2.Բաբկեն Պողոսյան
3.Արման Կարապետյան
4.Սարգիս Գրիգորյան
5.Սնակ Սիմոնյան
6.Գեղամ Ղազարյան

7.Սերգե Մկրտչյան
8.Ավետիս Մինասյան
9.Հարություն Կարապետյան
10.Մկրտչյան Էմին
11.Արմեն Ծառուկյան
12.Նարեկ Գրիգորյան
13.Արմեն Գրիգորյան
14.Վահե Եղիազարյան
15.Սարգիս Մուրադյան
16.Ղուկաս Հակոբյան
17.Դավիթ Մանուկյան
18.Գագիկ Ավետիսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ. ՍԱՓԵՅԱՆ

ք. Թալին
28 փետրվարի 2024թ.